Նախագիծ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ

Պ-324[1]-23.10.2019-ՏՏԳԲ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքի (այսուհետև՝ Օրենք) 12-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 25.1-րդ, 25.2-րդ և 25.3-րդ կետերով.

«25.1) սահմանում է շրջիկ առևտրի կետերին ներկայացվող պահանջները, պայմանները, ժամկետները, շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը, դրանց տրամադրման (հատկացման) կարգը, պայմանները և գործունեության իրականացման ժամերը, ինչպես նաև վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների չթույլատրվող տեսակները.

25.2) սահմանում է շրջիկ առևտրի կետերի կամ տրանսպորտային միջոցների հատուկ տարածք տեղափոխելու, դրանք այնտեղ հաշվառելու կարգը և շրջիկ առևտրի կետերի կամ տրանսպորտային միջոցների հատուկ տարածք տեղափոխման և պահպանման համար վճարների չափը.

25.3) սահմանում է Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման տարածքներում (փողոցներ, հրապարակներ, զբոսայգիներ և այլ տարածքներ) շրջածախ առևտրի իրականացմանը ներկայացվող պահանջները, պայմանները, շրջածախ առևտուր իրականացնելու միջոցով վաճառվող ապրանքների տեսակները և շրջածախ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը»:

Հոդված 2. Օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 4.3-րդ, 4.4-րդ և 4.5-րդ կետերով.

«4.3) սահմանված կարգով տալիս է Երևան քաղաքում շրջիկ առևտրի կետի միջոցով վաճառքի կազմակերպման կամ ծառայության մատուցման թույլտվություն.

4.4) սահմանում է շրջիկ առևտրի իրականացման համար նախատեսված թույլատրելի վայրերը գծանշման և նշանով կահավորման կարգը.

4.5) սահմանված կարգով տալիս է Երևանում շրջածախ առևտուր իրականացնելու թույլտվություն»;

Պ-**324**[1]-23.10.2019-ՏՏԳԲ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքի (այսուհետև՝ Օրենք) 12-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 25.1-րդ, 25.2-րդ և 25.3-րդ կետերով.

«25.1) սահմանում է շրջիկ առևտրի կետերին ներկայացվող պահանջները, պայմանները, ժամկետները և վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների տեսակները, շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը, դրանց տրամադրման (հատկացման) կարգը, պայմանները և գործունեության իրականացման ժամերը~~:~~, ինչպես նաև վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների չթույլատրվող տեսակները.

25.2) սահմանում է շրջիկ առևտրի կետերի կամ տրանսպորտային միջոցների հատուկ տարածք տեղափոխելու, դրանք այնտեղ հաշվառելու կարգը և շրջիկ առևտրի կետերի կամ տրանսպորտային միջոցների հատուկ տարածք տեղափոխման և պահպանման համար վճարների չափը.

25.3) սահմանում է Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման տարածքներում (փողոցներ, հրապարակներ, զբոսայգիներ և այլ տարածքներ) շրջածախ առևտրի իրականացմանը ներկայացվող պահանջները, պայմանները, շրջածախ առևտուր իրականացնելու միջոցով վաճառվող ապրանքների տեսակները և շրջածախ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը»:

Հոդված 2. Օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 4.3-րդ, 4.4-րդ և 4.5-րդ կետերով.

«4.3) սահմանված կարգով տալիս է Երևան քաղաքում շրջիկ առևտրի կետի միջոցով վաճառքի կազմակերպման կամ ծառայության մատուցման թույլտվություն.

4.4) սահմանում է շրջիկ առևտրի իրականացման համար նախատեսված թույլատրելի վայրերը գծանշման և նշանով կահավորման կարգը.

4.5) սահմանված կարգով տալիս է Երևանում շրջածախ առևտուր իրականացնելու թույլտվություն»

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Պ-324[1]-23.10.2019-ՏՏԳԲ-011/1 «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի ներկայացված առաջարկների վերաբերյալ

Առաջարկության հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 12-րդ հոդվածի 1-ին մասի 25.1) կետում «պայմանները» բառից հետո հանել «և» բառը, ավելացնել «ժամկետները,» բառը, իսկ «ժամերը» բառից հետո ավելացնել «ինչպես նաև վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների չթույլատրվող տեսակները.» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է: